

Հ. ՂԵԽՈՆԴ ԱԼԻՇԱՆԸ ՍԵՒ ԼԵՌԱՆ ՎԱՆՔԵՐԻ ՄԱՍԻՆ

ԲԱՆԱԼԻ ԲԱՌԵՐ. Ղեւոնդ Ալիշան, կրիկիս, Սեւ Լեռան վաճքեր, դպրութեան միջազգային կենտրոն, յունական, յատինական, հայկական, արարական աղբիւրներ, ձեռագրեր

«Ի Սեաւ մըթին լեառն անուանեալ՝
Ուր են հոգիի լուսաւորեալ,
Զյոգնավրդով կեսնըս քողեալ,
Զոր եւ երազ էր ծանուցեալ,
Եւ զանմարմնոց կեսնս ընկալեալ
Զրանի սիրողարն հաւաքեալ
Եւ առ իմեան բնակեցուցեալ,
Զգիրըս Հոգւոյն միշտ ընթերցեալ,
Եւ ընդ նասին յար խօսակցեալ»:

(Ներսէս Շնորհալի)

Հայր Ղեւոնդ Ալիշանի կամ Քերովքէ Ալիշանեան Պետրոս-Մարգարի լուման հայագիտութեան համար անգնահատելի է. նրա հետազօտութիւնները մինչեւ ցայժմ շարունակում են զարմացնել գիտնականներին եւ յաճախ գրեթէ միջնադարեան աղբիւրի կարգավիճակ ստանում այլուր չվկայուած տեղեկութիւնների շնորհիւ: Նա, ի թիւս կարեւոր, հետաքրքրական եւ բազմաբնոյթ նիւթերի՝ անդրադարձել է նաեւ հայկական վանքերին վերաբերող թեմային, ջանալով պարզել դրանց տեղադրութիւնը, այդտեղ կատարուած անցքերը՝ օտար լեզուներից թարգմանելով դրանց մասին եղած կարեւոր տուեալները:

Հայր Ալիշանի ուսումնասիրութեան ծիրից չեն վրիպել նաեւ Սեւ Լեռան վանքերը, որոնց մեծ գիտնականն անդրադարձել է տարբեր երկերում:

Ընդմիջարկելով թեման՝ կ'ուզէի ասել, որ փաստօրէն Ալիշանի վանորէից տեսութեանը նուիրուած աշխատութիւնները քարտէզագրութեան եւ աշխարհագրութեան ոլորտին են պատկանում:

Զափազանց կարեւոր քարտէզագրութեան դէպքում բաւական զգալի առաջընթաց կայ, եւ պատմական քարտէզները մեծ հետաքրքրութիւն են վայելում՝ արժանանալով խորամուտ քննութիւնների եւ հրատարակութիւնների: Նոյնը չի կարելի ասել աշխարհագրութեան վերաբերեալ այսօր այն շատ քիչ մարդկանց է հետաքրքրում եւ, ցաւօք, կարծես թէ մահացող գիտութիւն կարող է համարուել: Սակայն հայր Ալիշանի երկերում աշխարհագրութիւնն այնքան խորը եւ գրաւիչ է ներկայացուած, որ նման մատուցման դէպքում աշխարհագրական այդ տեղեկութիւնները՝ քարտէզների եւ տեղանունների ներգրաւմամբ կարող են հիմք հանդիսանալ ժամանակակից տեսութիւնները կազմաւորելու համար եւ մեծապէս նպաստել խնդրին առնչուող հետազոտութեանը: Այսինքն՝ այդ ոլորտը հայր Ալիշանը հասցերել է մի այլ՝ աւելի բարձր եւ լուրջ կարգավիճակի: Նման մօտեցման կիրառման դէպքում, կարծում եմ, կը փոխուի որոշ չափով աշխարհագրութեան (մասնաւորապէս պատմական աշխարհագրութեան) վերաբերեալ եղած իրավիճակը. այն կարող է արժանանալ նաեւ երիտասարդութեան հետաքրքրութեանը:

Սեւ Լեռան բազում վանքերը հանդիսացել են դպրութեան իւրովի մի միջազգային կենտրոն, որտեղ ապրում եւ աշխոյժ աշխատանք էին ծաւալել ժամանակի ասորի, հայ, յոյն, լատին, վրացի եւ այլ՝ առաջադէմ գիտնական վարդապետներ, վանականներ, որոնք կարող էին գտնել այստեղ ոչ միայն հոգեւոր ուղեցոյցներ, այլեւ գիտական նորութիւններ: Նրանց սրբակեաց կեանքի մասին են վկայում Ներսէս Շնորհալու վերաբերեալ բառերը՝ դատելով որոնցից կարելի է նկարագրել այդ կեանքը հետեւեալ կերպ. գիր եւ գրականութիւն սիրող («զրանի սիրողալ հաւաքնալ») այդ

1 Տե՛ս՝ Ալիշանի մեզքերած տեղեկութիւնն այդ մասին. «Montagna Nigra dicatur in quo multi sunt heremita ex omni genere et natione, et plura monasteria monachorum, tam Græcorum quam Latinorum...» (Marino Sanuto, *Liber Secretorum Fidelium Crucis, Hanoviae 1611*, III, V, 4, p. 174.) = «Ասւում է, որ Սեւ Լեռներում շատ անապատականներ կային՝ բազում ցններից և ազգերից. շատ էին նաև միայնակեացների վամբերը՝ թէ՝ յոյների եւ թէ՝ լատինների...»: Մարինոյ Սանուս Աւագը (1260-1338) վենետիկցի պետական գործիչ եւ աշխարհագրագէտ էր, որն առաւել յայտնի է խաչակրաց ոգին եւ շարժումը վերակենամացնելու իր փորձերով, ինչը եւ շանացել է արտայայտել իր միակ, բայց ծաւալուն եւ հետաքրքրական, ֆարտէգներով յագեցած այս աշխատանքում: Նա այցելել էր Սեւ Լեռան վամբները, և այս տեղեկութիւնը միակը չէ մրա երկում, տե՛ս օրինակ էջ 244:»

միայնակեացները՝ լուսաւորուած հոգիները («հոգիք լուսաւորեալ»), ապրում էին մեկուսացուած («եւ առ ինձեան բնակեցուցեալ»)՝ հրեշտակների կեանքով («զանմարմնոց կեանս»), մշտապէս ընթերցելով Աստուածաշունչը («զԳիրս Հոգուոյն միշտ ընթերցեալ»):

Անհասկանալի պատճառներով յոյժ ուշագրաւ այս թեման շատ քիչ է ուսումնասիրուած³, մասնաւորապէս ինորհրդային շրջանում, մինչդեռ այն միջնադարեան Հայոց եկեղեցու, հայ մշակոյթի, դաւանաբանութեան, քաղաքականութեան, գիտութեան եւ կրթութեան վերաբերեալ հարուստ նիւթ է պարունակում: Հինգ դրա մասին է Ղեւոնդ Ալիշանի հետեւեալ նկատառումը:

«Պիտակի հետազոտութիւն մը պիտի ըլլայ այս բազմաթիւ վանորէից մնացորդքի եւ հետքի քննել, որչափ որ տեղին եւ տեղը բռնող թիւրմէնից կամ նմանեաց դժարութիւնն քողու։ Մեր պատմչաց բով հազիւ 10 կամ 12 անուն կը գտնեմք Ասորից եւ Հայոց վանաց։ Մերայոց մէջ ամենէն անուանին էր Կարմիր վանքն մօս ի Քեսուն, իշխանակիստն Գոռ Վասիկն, եւ անոր մօս Արձգի վանքն...»⁴։

Թերեւս կարելի է ասել, որ վերջերս աշխուժութիւն է նկատւում այս թեմայի վերաբերեալ, մասնաւորապէս երիտասարդների կողմից⁵: Ի հարկէ, Ալիշանի ասած «հազիր 10 կամ 12 անուն»ը

2 ՆԵՐՍԻ ԾԱՌՈՀԱՆԼԻ, Վիպասանութիւն, ոխո, ոծգ եւն, <http://digilib.aua.am/book/300/305/>

3 WEITENBERG, J. J. S., "The Armenian Monasteries in the Black Mountain, East and West in the Medieval Eastern Mediterranean I. Antioch from the Byzantine Reconquest until the End of the Crusader Principality" (Orientalia Lovaniensia Analecta, 147), Leuven-Paris-Dudley, MA, ed. by K. Ciggaar and M. Metcalf, 2006, 79-93; ՏԵՐ-ՊԵՏՐՈՎԵԱՆ, Լ., Խաչկրիմերը և հայերը, Երեւան 2005, հո. Ա., 421; ՇԻՐԻՆԵԱՆ, Է. Մ., Դպրութիւնը կիլիկանի Հայաստանի Սեւ Լեռան հայկական վաներում [Teaching and learning at the Armenian Monasteries on the Black Mountain of Cilician Armenia], ի Բանքեր Մատենադարանի 21, Երեւան 2014, 351-362; ԿԱԶԱՐՅԱՆ, Օ., Церковные контакты армян-халкидонитов и латинян в период крестовых походов на Восток (XI-XIII вв.), <http://deusvult.ru/102-tserkovnye-kontakty-armyan-khalkidonitov-i-latinyan.html>:

⁴ ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ, Շնորհալի եւ Պարագայ իւր, Վենետիկ 1873, 49:

5 Այսպէս, Մաշտոցի անուան Մատենադարանի ասպիրանտ Դավիթ Գևորգեանը ստանձնել է ատենախօսութիւն գրել հենց այս թեմայով, իսկ Գ. Դանիելեանը հրապարակել է շատ ենտաքրքրական մի յօդուած, որում արժեքաւոր տեղեկութիւններ է հաղորդում Սեւ Լեռան բազում վաճեների վերաբերեալ՝ ԴԱՆԻԵԼԵԱՆ, Գ., Հայկական վաճեների եւ եկեղեցիների մասին յիշատակութիւններ Արու ալ-Մաշարիմի երկի ամսատ էջերում, ի թամբեր Մատենադարանի, N 26, Երևան 2018, 22-57:

այսօր հասել է մի քանի տասնեակի՝ չնորհիւ ձեռագրերի յիշատակա-բանների նիւթի ներգրաւման, ինչպէս նաեւ թեմային վերաբերող օտար աղբիւրների ուսումնասիրութեան։ Այս առումով վերջերս յայտնաբերուած արաբական աղբիւրները՝ ի թիւս այլոց, արժէքաւոր տեղեկութիւններ են պարունակում նաեւ Սեւ Լեռան հայկական վանքերի մասին։ Դրանք լիովին փոխում են մեր պատկերացումը խնդրոյ առարկայ վանքերի մասին, այնտեղ ապրող վանականների եւ դրանց թուի (ինչպէս վանքերի, այնպէս էլ վանականների) մասին. պարզում է, որ դրանք ոչ թէ մի քանի տասնեակ են, այլ մի քանի հարիւրն են.

«Անտիռքին մերձ գտնեւում են Սեւ լեռները, որոնց շրջակայ- քում 700 հայկական վանք կայ, որոնցից իւրաքանչիւրը շրջապարհսպ, աշտարակ ունի, որոնց շուրջը՝ վանականների համար նախատեսուած մենախցեր։ Այնտեղ եպիսկոպոս կայ⁶ եւ 700 եւ աւելի նգնակեաց վա- նական»⁷:

Քիչ ստորեւ, Սեւ լեռների անապատներ վերնագրի ներքոյ, այս տեղեկութիւնը կարծես թէ կրկնուում է որոշ յաւելումով.

«Սեւ լեռների անապատներ։ [Արդէն] յիշուել են Սեւ լեռներում գտնեւող մի շարք վանքերը։ Հայերն այնտեղ 700 մենաստան ունեն՝ քնակեցուած եպիսկոպոսներով, քահանաներով, վանականներով, նգնաւորներով եւ մենակեացներով՝ [դեռ] չհաշուած այն վանքերը, որոնք չեն յիշատակուել՝ նրանցում վանականների ֆիչ լինելու պատ- ճառով։ Նրանցից իւրաքանչիւրում մօտ 10 վանական կայ՝ ի լրումն այն անհաշուելի բուով վանականների, որոնք Անտիռքի շրջակայքում կան, Կեսարիայում, Մարաշում, Տարսոնում, Կիլիկիայում եւ յարակից այլ վայրերում»⁸:

Հետաքրքրական է նաեւ այս յօդուածի տեղեկութիւններն առ այն, որ ԺԴ.-ԺԵ. դդ. արաբագիր հեղինակները Սեւ լեռները երթեմն նաեւ Հայկական լեռներ են անուանել⁹:

6 Այսպէս յօրինակիմ:

7 ԴԱՆԻԷԼԵԱՆ, Գ., Աշ. աշխ., 40-41:

8 ԴԱՆԻԷԼԵԱՆ, Գ., Աշ. աշխ., 41-42:

9 Անդ, 40-41, տե՛ս համար 70 ծանօթագրութիւնը. «Արարագիր հեղինակները Սեւ լեռները երթեմն նաև «Հայկական լեռներ» են կաչել, ինչպէս օրինակ Արու ալ-Ֆիդան (մահ. 1331 թ.) եւ Արամից օգտուած ալ-Կալաշանդին (մահ. 1418 թ.). «Ալ-Լուլֆամի լեռները ճգլում են նաև դեպի հիւսիս, մինչեւ որ հասնում են Սահիւթին, ալ-Շուլդին, ալ-Բաքքասին եւ ալ-

ՍԵԼ ԼԵՇՈՆԵՐԻ ՀԱՋԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐԸ ՄԱՍ ԷՒՆ ԿԱՊՄՈՒՄ Ամանոսի եւ, թերեւս, Տաւրոսի լեռների վրայ տեղակայուած բազմաթիւ վանքերից: Դրանց գործունէութիւնը գրանցուած է դեռեւս Ե-Զ. դարերից, սակայն այդ շրջանի վերաբերեալ տեղեկութիւնները սակաւաթիւ են: Ի տարբերութիւն դրան, սկսած ԺԱ. դարից, կարելի է խօսել այդ վանքերի գործունէութեան ծաղկման, եւ անգամ «միջազգային» շրջանի մասին: Ի դէպ, այդ ժամանակ, Կիլիկիայի սահմաններն արեւելքում անցնում էին Հէնց Ամանոսի, լեռների վրայով¹⁰: Սակայն ՍԵԼ ԼԵՇՈՆԵՐԻ վանքերի այս շրջանին վերաբերող տուեալները եւս շատ չեն: Ցունական, լատինական եւ հայկական աղբիւրներում առկայ են վկայութիւններ, որոնք փաստում են այս վանքերում բնակուող տարբեր ազգերի վանականների միջեւ եղած որոշ դաւանաբանական տարածայնութիւնների եւ անգամ լարուածութեան մասին, սակայն միեւնոյն ժամանակ, յենուելով այդ իսկ աղբիւրների տեղեկութիւնների վրայ, կարելի է խօսել թուարկուած ազգերին պատկանող վարդապետների մրցակցութեան եւ գիտական նիւթի ու մօտեցումների բաղդատման մասին: Պարզ է, որ այս ամէնը եւս նպաստեց, մասնաւորապէս, հայկական, վրացական եւ ասորական գրականութեան հարստացմանը:

Դատելով աղբիւրներից՝ սկսած ԺԱ. դարից, ՍԵԼ ԼԵՇՈՆԵՐԻ հայկական վանքերը բազմաթիւ էին, ընդ որում հայերը ներկայացուած էին այստեղ ոչ միայն առաքելական դաւանանքով. օրինակ կային նաեւ քաղկեդոնական հայերի վանքեր: Շնորհիւ զանազան աղբիւրների, մասնաւորապէս յիշատակարանների, մեզ են հասել ՍԵԼ Լեռան հայկական վանքերի անուանումները, օրինակ՝ Կարմիր Վանք, Շափիրին, Քարաշխտու, Պառլառոյ («դրախտ Աստուծոյ»), Պաղակձիակ, Աղքայաքաղին, Արեգ կամ Արեգնի (Արեգին) վանք կամ անապատ, Վարդկան, Բարսեղեանց, Շուղր վանք կամ անապատ, Մաշկեւոր, Կաստաղոն, Խորին անապատ, Մատին, Առաքելոց վանք, Սուրբ Պօղոս, Յեսուվանք, Զօրուի Կողեռն, Ռոդու, Սուրբ Գէորգ եւ այլն: Ինչպէս նշեցինք, այստեղ ապրում էին նաեւ քաղկեդոնական հայեր¹¹, եւ թուարկուած այս վանքերի թուից նրանց էին պատկանում օրինակ՝ Պաղակձիակը, ու Աստուծածին, Արեգ եւ Ռոդիտիոն վանքերը: Ի դէպ, վերջինիս մասին

Կուսեյրիթ: Թիշեալ լեռներն աւարտուամ են Անտիոքի մօտ եւ կտրուամ, եւ նրանց առջեւ երեւան են գալիս Հայոց լեռները»:

10 WEITENBERG, J. J. S., Աշ. աշխ., 79-83:

11 Այս մասին մանրամասն տե՛ս, Շիրինեան, Է. Մ., Դպրութիւնը..., 353:

ուշագրաւ տեղեկութիւններ է յայտնում Նիկոն Սեւեռնցին¹², որն իր հետ կատարուած բազում իրադարձութիւններից յետոյ հանգ-րուանում է Ռոփիդիու վանքում, որտեղ, ինչպէս հէնց նա է ասում, շատ քաղկեդոնիկ հայեր էին բնակւում: Այսինքն՝ սա էլ հետաքրք-րական մի փաստ է, որ փաստօրէն հայերին պատկանող վանքե-րում, նրանց հետ կարող էին ապրել նաեւ օտարները:

Հարկ է նաեւ նշել, որ հանրաւոր է ենթադրել, որ այստեղ նշուած որոշ վանքերը կարող էին ներկայացուած լինել մի քանի կառոյցներով մի անուան տակ, այսինքն՝ վանական համալիրը կա-րող էր պարունակել մի քանի մենաստան: Օրինակ՝ յայտնի կար-միր Վանքը, որն անգամ կաթողիկոսանիստ է եղել, յաճախ շփոթ-ւում է ոչ պակաս հոչակ վայելող Շուղը անապատի հետ: Շատերի մօտ անգամ գայթակղութիւն է առաջանում նոյնացնել դրանք, մինչդեռ հանրաւոր է ենթադրել, որ այդ վանքերը եղել են միեւ-նոյն վանական համալիրի կազմում: Եթէ ընդունենք նման մտա-ծելակերպը այդ դէպօւմ զարմանալի չի թուայ վերը նշուած արաբական աղբիւրների տուեալները 700 հայկական մենաստան-ների վերաբերեալ: Այդ թիւը շատ տպաւորիչ է Սեւ Լեռների բաւական ընդարձակ տարածքի համար, որոնք թերեւս գրաւում էին թէ՛ Ամանոս եւ թէ՛ Տաւրոս լեռների մակերեսու:

Ինչեւէ, նշենք նաեւ, որ այս վանքերում գործել եւ սովորել են այնպիսի համբաւաւոր վարդապետներ, ինչպիսիք էին Ստեփա-նոս Մանուկը եւ նրա աշակերտներ իգնատիոս Սեւեռնցին, Գրի-գոր Պահաւունին, Ներսէս Շնորհալին, Սարգիս Շնորհալին եւ այլք: Կան նաեւ անուններ, որոնք շատ մեծ ներդրում են ունեցել Սեւ Լեռան կենտրոններում ուսանողներին կրթելու եւ գիտու-թիւնը զարգացնելու համար, սակայն նրանց վերաբերեալ, բացի անունից գրեթէ ոչինչ չգիտենք: Օրինակ, հէնց վերը յիշատակուած Ստեփանոս Մանուկի մասին բացի այն, որ նա Շնորհալի վարդապետների մի ամբողջ երամ է կրթել (ինչն արդէն չափա-զանց մեծ ներդրում է), ոչինչ չգիտենք: Այս մասին է գրում հայր Ալիշանը՝ անդրադառնալով «Ստեփանոս Կարմիրվանեցի կամ Գիտ-նականի» գործունէութեանը:

«...Ասաց ոմն յիմաստնոցն, եթէ ծածկեալ գիտութեան վարդա-պետի՝ թերան են աշակերտներն: Եւ ահա շատ աշակերտներէն զատ (որոց անուաններն ալ ծածկուած են) կան չորս աշակերտք ծանօթք,

12 Անդ, 355-358:

չորս արծաթի բերանք, որք մեր ժԲ. մեծանշան դարուն դպրութեան եւ գիտնոց պարագլուխ են, եւ ամենէն ընտիր եւ յատակ հայկարանուրեամբ եւ վայելչարանուրեամբ գրողք. Իգնատիոս եպիսկոպոս՝ Ղուկասու աւետարանի մեկնիչն, Սարգիս վարդապետ, Կաթողիկեայց քղբոց մեկնիչն, եւ երկորին Պահլաւունի հարազատէն՝ Գրիգորիս եւ Ներսէս. Որոց նման մաքուր եւ շնորհազարդ գրողք կամ չեն եղած կամ շատ ֆիշ իրենցմէ առաջ եւ ետև, եւ յետ Ե. դարու Թարգմանչաց անոնց հաւասար օրինակագիրք են հայերէն դպրութեանց¹³:

Բազում էին նաեւ Հայաստանից Սեւ Լեռ մեկնած վարդապետները, նրանց թւում էին. Գէորգ Մեղրիկը, Գրիգոր Լոռեցին, Կիրակոս Բանասէրը, Մխիթար Գօշը եւ այլք: Ուսումնասիրելով այս Հեղինակների գործունէութիւնը՝ Հնարաւոր է ասել, որ Սեւ Լեռան Հայկական վանքերում տեղի ունեցաւ հին, երբեմն անդամ մոռացուած, աւանդոյթների հաշտեցումը նոր գիտական մօտեցումների հետ, ինչը մեծ զարկ տուեց Հայկական միջնադարեան սքոլաստիզմի զարգացմանը եւ մասնաւորապէս Աստուածանչի մեկնութիւնների հայկական դպրոցի յետագայ գործունէութեանը եւ ուժեղացմանը: Թերեւս կարելի է ենթադրել, որ Սեւ Լեռների թէ՛ վանքերի եւ թէ՛ վանականների բազմութիւնը պայմանաւորուած էր նաեւ անհանգիստ ժամանակներով, բազում յարձակումներով, որոնցից որոշ չափով կարելի էր պատսպարուել Սեւ Լեռների երբեմն անանցանների բարձրունքների վրայ, թէպէտեւ, ինչպէս վկայում են պատմական փաստերը, յաճախ անդամ դա չէր օգնում:

Այս հարցերն Ալիշանը քննարկում է նաեւ «Սիսուան»¹⁴ հանդամանալից աշխատութեան մէջ, որտեղ երկու մասով՝ «151. Ճկեր գաւառ. - Սեաւ Լերինք. Բոնաւորք կողմանցու» եւ «152. Վանորայք Սեաւ Լերին» վերնագրերի ներքոյ լուսաբանում է ինդրոյ առարկայ լեռներին վերաբերող Հարցերը¹⁵: Առաջինում՝ տեղակայուած են տուեալներ կապուած վանքերի անուան, այդտեղ աճող բուսականութեան, աշխարհագրական դիրքի եւ այլն, իսկ երկրորդում՝ վանքերի գործունէութեան եւ այնտեղ կենցաղավարող անձերի վերաբերեալ:

13 ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ, Շնորհալի եւ Պարագայ իւր, 51:

14 ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ; Միսուամ. Համագրութիւն Հայկական կիլիկիոյ եւ Լեռու Մեծագործ, Վենետիկ 1885; ALISHAN, G., Sissouan ou l'Arménio-Cilicie description géographique et historique. Venise – St. Lazare 1899:

15 Անր, 402-411:

«Վանորայք Սեաւ լերին» հատուածում հայր Ալիշանը տասներեք կէտերով կամ անուններով՝ (որոնցից իւրաքանչիւրը մի վանքի է վերաբերում) անդրադառնում է հայ պատմիչների կողմից վանքերի վերաբերեալ վկայուած տեղեկութիւններին եւ յաւելում դրանք նորանոր նիւթերով։ Նախ Ալիշանը յայտնում է որոշ տեղեկութիւններ այդ վանքերի պատմութեան (մասնաւորապէս կանգ առնելով խաչակրաց ժամանակաշրջանի վրայ եւ մէջբերելով հայ պատմիչների գրուածքներից¹⁶) եւ այդտեղ գործող ազգերի վերաբերեալ։ Ալիշանը նշում է, որ դրանք պայծառացել էին դեռեւ «զհոռոմեական դարուցն» եւ այնպէս էին փայլում, որ անգամ արժանացել էին «Սուրբ» անուանուելու։

«...եւ այնքան պայծառ փայլեալ ի լերինքն՝ մինչեւ Սուրբ անուանիլ սոցա իրը յատուկ անուամբք, որով հոչակին ստէպ առ պատմիչս մեր ի ԺԱ.-ԺԳ. դարս. իրբեւ զերծ եւ անելոյթ դադարք հոգեսիրաց, կրօնաւորաց եւ անապատականաց այլ եւ այլ ազգաց, որոց երեք գլխաւորք, Հայք, Ասորիք եւ Յոյնք, երեցուն եւս աշխարհացն միջասահման գոլով տեղույթ, յորս յարեցան եւ Վրացիք, ապա եւ Լատինք յաւուրս Խաչակրացը»¹⁷:

Պատմելով իգնատիոս վարդապետ Սեւլեռնցու Ղուկասի Աւետարանի մեկնեութեան գրելու պարագաների մասին, նա անդրադառնում է նաեւ այն վանքին, որտեղ ստեղծագործել էր իգնատիոսը եւ բնութագրում ոչ միայն այդ վանքը, այլեւ Սեւ Լեռների վանքերի համաստեղութիւնը՝ անուանելով այն «համալսարան»։

«Բայց մեր յիշատակելս զսա՝ ոչ վասն ընկերակցութեանն եւ դպրութեանցն է, այլ զի ի նոյն լեռնափակ համալսարանս վարժեցաւ, եւ յայրում մենաստանի գրեաց զոսկեղիմիկ եւ զմիակ ծանօթ մեզ մատեանն այն Մեկնեութեան. եւ կոչէր մենաստանն. (Ը.) Շափիրին»¹⁸:

Սեւ Լեռան վանքերի վերաբերեալ Ղեւոնդ Ալիշանի հետագութիւններն ունեն նաեւ մի շատ հետաքրքրական ու կարեւոր զարգացում. դրանցում մեծ գիտնականը անդրադառնում է նաեւ այդտեղ եղած հայկական վանքերի յետագայ ճակատագրին, մասնաւորապէս, երբ դրանք կապուած են իտալիայի հետ։ Մէջբերուած բազում տեղեկութիւններից ակնյայտ է դառնում, որ շատ

16 Օրինակ, ԱՐԻՍՏՈՆԿԵԼ ԼԱՍՏԻՎԵՐՏՑԻ, ..., Զ., ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌՀԱՑԵՑԻ, ...՝ ՂԶ., տե՛ս, ԱԼԻՇԱՆ, Միասնական, 403:

17 Անդ, 404:

18 Անդ, 409:

վանքեր պահպանուել են հայերի անուան տակ եւ յետագայում աւանդաբար կրել այդ անուանումը, անգամ այն դէպքերում, երբ արդէն եղբայրութեան մէջ չկար այլեւս եւ ոչ մի հայ:

Այս առումով ամենահետաքրքրականն են Ժ. Եւ ԺԳ. համարների տակ վկայակոչուած Հատին վանքերը: Այսպէս, Ժ. Կէտից կամ Գլվից տեղեկանում ենք, որ այս վանքերի շարքում առկայ էր Բենեդիկտեան միաբանութեանը պատկանող Ս. Գէորգ վանքը, որի Անգել (Angelius) անունով աբբահայրը յիշատակուած է 1140 թ. տակ¹⁹:

Հատինաց յաջորդ (ԺԱ.) մենաստանի մասին հայր Ալիշանը յայտնում է. «...Էր Կիստերսեան միանձանց՝ ի լերինքս, Ս. Սարգիս, de Jubino մականուանեալ, եւ յիշեալ յ'ժբ. դարու»²⁰: Սա հէնց այն դէպքն է, երբ Ալիշանը, առանց որեւէ երկ յղելու, առաջ է բերում տուեալներ, եւ փաստօրէն իր այս գործն է դառնում միակ աղբիւրը, քանի որ այս տեղեկութիւնը չկայ այլուր:

ԺԲ. համարի ներքյ Ալիշանը տեղադրում է բաւական հետաքրքրական տեղեկութիւն՝ քաղուած արքունական մի նամակից, որում խօսում է Փոքր Ասիայում գտնուող Ս. Գէորգ հայերի վանքի մասին, որը նա համարում է.

«...ի լատինական վանիցս էր աներկրայապէս», եւ որը «քէպէտ չասի յայտնապէս ի Սեւա լերինս լինել, այլ հաւանելի է. զի միւսն որ ի Գահս Կիլիկիոյ՝ վաղ ուրիմն խափանեալ էր, եւ տեղին ընդ այլազգեաց ձեռամբ անկեալ»²¹:

Նամակում նշուած է, որ այս վանքի առաջնորդն էր Ներսէս, որն իր ընկերոջ՝ Յակոբ անունով մի վանականի հետ²² ճանապարհորդում էր արեւմտեան երկրներով «ի հաւաքել անդ նուէրս ի պէտս շինութեան եւ նորոգութեան եկեղեցեաց եւ վանորէից՝ աւերելոց յապատակաց. եւ ի սկզբն 1364 ամի՝ գոլով ի Լոնտոն, ընկալաւ յնդուարդայ Գ. քագաւորէ գիր ընծայութեան (յ'7 փետրուարի) առ հպատակս իւր, շրջել յուխտս աշխարհին Անգղիոյ՝ մինչեւ ցամ մի»²³:

19 Անդ, 410:

20 Անդ:

21 Անդ:

22 “Venientes ad nos religiosi viri, Fratres Nersis abbas Monasterij S. Georgij in Armenia Minor, et Jacobus ejus commonacus...” (=«Մեզ մօտ եկան այլք կրօնաւորք՝ եղբայրներ ներսէսը՝ Փոքր Ասիայի Ս. Գէորգ վանքի առաջնորդը եւ Յակոբը՝ նրա ընկերակիցը...»), ԱԼԻՇԱՆ, Սիսուան, 410:

23 Անդ, 410:

Այսինքն՝ այստեղ մենք գործ ունենք այսպէս կոչուած Ս. Գէորգ հայերին պատկանող մի վանքի հետ, որը ենթադրաբար (ըստ Ալիշանի) գտնւում էր Սեւ Լեռան վանքերի տարածքում:

ԺԴ. Համարի տակ Ալիշանը յաւելում է մէկ այլ լատինական անանուն վանք, որի մասին ասւում է.

«...մեզ անյայտ՝ մենաստան մի Սեաւ լերին, յորմէ ի սկիզբն ԺԴ. դարու, նեղեալ ի ստեպ արշաւանաց Եգիպտացւոց, յաւուրս Հեթմոյ Բ., խոյս տուեալ վանահայրն Մարտիրոս՝ միով ընկերաւ, զոր Գուլիելմոս կոչեն Լատիֆը (զի առ նոսա գտանի վաւերական պատմութիւնս), եկին ի Գենուա, նաւուր նոցին Գենուացւոց, եւ շնորհս գտեալ ի քաղաքացեացն, ինդրեցին ի Քահանայապետէն (Կղեմայ Ե.) հաստատել անդ վանս. որում հաւանեցաւ սա կոնդակաւն ի 20 փետր. 1307. բայց ոչ կարելով նոցա գտանել տեղի պատշաճ ի քաղաքին՝ ձեռն արկին արտաքոյ՝ այլ ոչ հեռի՝ կառուցանել վանս եւ եկեղեցի մի փոքր յանուն Ս. առաքելոյն Բարդողոսմէոսի, յագարակի բարեպաշտի ուրումն՝ որ ես նոցա գտեղին. եւ վերասին իննդրեալ՝ ընկալան ի Քահանայապետէն զիաստատութիւնն, հանդերձ շնորհի՝ յարելոյ ի նոյն եւ գերեզմանասուն. Զայս ամենայն ծանուցանէ միւս եւս կոնդակ Կղեմայ (յ'2 ապրիլի, 1309), ուրեման առ Մարտիրոս առաջնորդ եւ առ ընկերութիւն տանն Հայոց Սեաւ լեռնեայց ի կարգէ Ս. Բարսիկ: Այս եղեւ մայրավանէ այլոց յորովից յայլ եւ այլ քաղաքս Խոսլիոյ, որի կոչէին վանորայք Բարսեղեանց կամ Հայ նորարց (Frati Armeni), թէ եւ յետ սակաւուց Խոտակացիք միայն կրօնաւորէին ի նոսին. այլ անուն Հայ նորարց եւ կարգի՝ տեւեաց ցրարձումն ուխտին՝ յամի 1650: Իրրեւ ազգի նախագոյն ծանօթացեալոյ Քրիստոսի՝ ոմն յազնուաց Գենուայ գիրաշալի Պատկեր Դաստառակին, որ թերեալ էր յարեւելից, կուակեաց վանականացն այնոցիկ Հայոց, ուր եւ ցարդ պատուի մեծապէս, եւ յանուն Հայոց կոչի տակաւին եկեղեցին, յորում կայ եւ տապան հայագիր, այլ նոր բոււականաւ 1687 ամի»²⁴:

Այս տեղեկատուութիւնը յայտնում է մեզ մի շարք կարեւոր փաստեր. նախ եւ առաջ որ ԺԴ. դարում տարաբնոյթ արշաւանք-ների պատճառով վատթար վիճակում գտնուող Սեւ Լեռների վանքերը լքում էին վանականների կողմից: Երկրորդ. որ կաթոլիկ դաւանանք ընդունած վանահայր Մարտիրոսը իր ընկերոջ՝ Գուլելմոսի հետ գալիս է Գենուա եւ խնդրում քահանայապետին, որպէսզի նա թոյլատրի այնուեղ վանք հաստատել: Քաղաքում

24 Անդ, 410-411:

պատշաճ տեղ չգտնելու պատճառով՝ քահանայապետը նրանց համար հողամաս է յատկացնում ոչ հեռու քաղաքից, որտեղ կառուցւում է վանք եւ Սբ. Բարոգուղոմէոսի առաքեալի անունը կրող մի փոքր եկեղեցի: Արդեօք սա չի՞ յիշեցնում հէնց Մխիթարեան միաբանութեան հիմնադրման պատմութիւնը: Երրորդ. «ընկերութիւն տանն Հայոց Սեաւ լեռնեայց ի կարգէ Ս. Բարսղի» արտայայտութիւնը կարող է ընկալուել, որ նրանք այստեղ միաբանութիւն հիմնեցին, ինչը եւս մի կուռան կարող է ծառայել վերն առաջարկուած Մխիթարեանների ուխտի նմանութեան վարկածի օգտին: Չորրորդ. այս վանքը դառնում է մայրավանք «այլոց յոլովից յայլ եւ այլ քաղաքն Խոտալիոյ», այսինքն՝ արդեօք մէջբերուած բառերի տակ կարելի է հասկանալ իտալիայում բնակուող հայերին, քանզի դժուար է ենթադրել, որ փոքր եկեղեցի ունեցող նորաստեղծ այս վանքը հարուստ վանական աւանդութիւն ունեցող այդ երկրում պէտք է դառնար «մայրավանք» իտալացինների համար: Հինգերորդ. արդեօք, այստեղ յիշատակուած «վանորայէ Բարսեղեանց կամ Հայ Եղբարց (Frati Armeni)» կարելի է նոյնացնել Սեւ Լեռան Բարսեղեանց անունը կրող վանքի հետ, այսինքն՝ որ Մարտիրոս վանահայրը ոչ թէ անցայտ վանքից էր, այլ հէնց Բարսեղեանց մենաստանից, որի անունը եւ վերականգնել էր նորաստեղծ վանքում: Վեցերորդ. փաստօրէն այս հատուածը նկարագրում է Սեւ Լեռան վանքերի յետագայ ճակատագիրը, այսինքն՝ այս տեղեկութիւնը կարող է վերաբերել ոչ միայն տուեալ վանքին, այլեւ բազում այլ վանքերի, որոնք, սկսած նկարագրուած ժամանակաշրջանից վաղուց ի վեր անկում էին ապրում տարբեր պատճառներով:

Ամփոփելով Սեւ Լեռների վանքերի վերաբերեալ իր այս երկում հաւաքած տեղեկութիւնները՝ Ալիշանը նաեւ կարծես թէ ուրուագծում եւ բնութագրում է Սեւ Լեռների տարածքը.

«...իցի՛ւ թէ եւ ի յաջողութիւն՝ հետախուզութեան սրբոց տեղեացն. յորոց հրաժեշտ կալեալ արդ՝ իցցուք յառ ատորոտով նոցին ի ծովեզրն, ի դաշտայինն ձկեր, եթէ օրէն իցէ այսպէս անուանել զանառոկ միջոցն ծովափենայ՝ մինչեւ ի լերիննե»²⁵:

Այսպիսով, հայր Ալիշանը հազորդում է կարեւոր, բազմաբնոյթ եւ բովանդակելի տեղեկութիւններ քննարկուող խնդրի վերաբերեալ: Սակայն, երբեմն, ինչպէս յատուկ է նրան այլ դէպքե-

լում եւս, նա յայտնում է տուեալներ, առանց դրանց աղբիւրը նշելու. այն դէպքում, երբ դրանք օտարալեզու հետազօտութիւններից են վերցրած կարելի է դրանք վերականգնել, սակայն թւում է, որ կան դէպքեր, երբ գիտնականն օգտուել է ձեռագրերից, եւ այս պարագայում միակ աղբիւրը մնում է հայր Ղեւոնդ Ալիշանը:

ՄԱՆԵԱ. (ԷՌՆԱ) ՇԻՐԻՆԵԱՆ

Summary

FR. GHEVOND ALISHAN ON MONASTERIES OF THE BLACK MOUNTAIN

MANYA ERNA SHIRINIAN

Ghevond Alishan largely contributed to Armenian Studies. His researches still remain valuable and continue to amaze scholars by the wide scale of his interests. Being a polyglot he used very diverse and various sources, preferring more study of manuscripts; often his study can gain almost a status of medieval source due to information not found elsewhere. Among other important and manifold material, he touched upon the topic of Armenian monasteries of the Black Mountain, trying to find out their location and giving an important information about them. In this context he dealt with the unique phenomenon of many monasteries at the Black Mountain from 6th to 13th centuries as a centres of teaching and learning and scholarship for different nations. The 11th century was the most flourishing and ‘international’ period for the activities at the Black Mountain’s monasteries; it was sort of international ‘university’ for Greek, Syrian, Latin, Armenian and Georgian monks, ascetics and simply authors, who came in search of a spiritual guide. The monasteries, which belonged to Armenians (at least in the 11th century): Karmir, Shapirin, Areg or Aregni, Vardkan, K’arashit’u, Barsegheanc’, Mashkevor, Paghakdziak, Parlahoy etc. There is information on Armenian personae who came to settle in these monasteries as from Armenian itself (like Georg Megrik, Grigor Lorec’i, Kirakos the Philolog, Mxitar Gosh and many others), as well from Cilician Armenia (Stepanos Manuk, Ignatius Sevlernc’i (of the Black Mountain), Nerses Shnorhali, Grigor the Second, Sargs Shnorhali. Ghevond Alishan gives indispensable testimonies by providing a variety of comprehensive and exhaustive information on the issue under discussion, especially when it concerns relationship of these monasteries with Italy. In this regard, the writing called “Sisuan” is especially important; two chapters of this work are dedicated to the monasteries of the Black Mountain. There he gives the names of the Armenian Catholic monasteries, situated on the Black Mountain; some testimonies concerning these monasteries are taken manuscripts or sources known only to him. Of particular interest are the passages, reporting on the further fate of the monks, who lived there and monasteries, which declined starting from the 13th century, in the result of many invasions and attacks.